

ԻՏԱԼԵՐԵՆԻ ԲԱՅԻ ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿԻ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ
(Ա.Սորափիայի «Արհամարհանք» վեպի
թարգմանության հիման վրա)

Իտալերենի բայի սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակը (*imperfetto*) անմիջապես սերում է լատիներեն "*imperfectum*" ժամանակից: Անցյալ անկատար ժամանակածը լատիներենից իտալերեն անցնելու երկար ճանապարհին ենթարկվել է մի շարք իմաստային և հնչյունաբանական փոփոխությունների: Այդպիսին է, օրինակ, /b/ բաղաձայնի վերածումը /v/-ի, երկու ձայնավորների միջև /b/ բաղաձայնի անկումը, հետագայում նաև ձայնավորների միջև գտնվող /v/ հնչյունի սղումը (*avea, aveano, potea, poteano* և այլն)¹: Մինչդեռ տվյալ բայածիկ վերջավորությունները նման են ներկա ժամանակի վերջավորություններին (*cantavo, cantavi, cantava*): Լատիներենում անցյալ անկատար ժամանակը լայն գործածություն ուներ նամակագրության մեջ, և գրելու պահին համապատասխանող ներկա գործողությունները հաճախ արտահայտվում էին անցյալ անկատարով: Այս ձևը արդի իտալերենում չի պահպանվել:

Անցյալ անկատար ժամանակը, ընդհանուր առմամբ, ցույց է տալիս անցյալ ժամանակում ընթացքի մեջ գտնվող, շարունակվող, հարածիզ գործողություն: Օրինակ՝ *Ieri noi parlavamo, leggevamo, discutavamo e scrivevamo* (Երեկ, մենք խոսում էինք, կարդում էինք, վիճում և գրում էինք): Այն ցույց է տալիս նաև անցյալում, որպես կարգ, կանոն, սովորություն, կատարվող կամ կրկնվող գործողություններ: Օրինակ՝ *Gli egiziani costruivano le piramidi per il re e facevano delle mummie dei re defunti* (Եգիպտացիները իրենց թագավորների համար բուռգեռ էին կառուում, մեռած թագավորների մումիաներն էին պատրաստում): Սովորաբար անցյալ անկատար ժամանակը նախադասությանը չի հաղորդում ավարտուն միտք, ինչպես՝ «*Ես երեկ վերադառնում էի տուն*», և զրուցակիցը սպասում է որևէ լրացման՝ միտքը ամբողջական դարձնելու համար, օրինակ՝ «*Ես երեկ վերադառնում էի տուն, երբ տեսա Մարկոյին*»: Անցյալ անկատարը սահմանական եղանակի պարզ ժամանակներից է և կազմվում է բայի հիմքին ավելացնելով համապատասխան վերջավորություններ՝ ի տարբերություն հայերենի, որում այն բաղադրյալ ժամանակ է և կազմվում է անկատար դերբայով և

¹ M. Sensi, Grammatica della lingua italiana, Arnoldo Mondadori Editore, S.p.A., Milano 1997, pag. 261

օժանդակ բայի անցյալի ձևերով, ինչպես *parlavamo-խոսում էինք, discutavamo-վիճում էինք, cantavamo-երգում էինք* և այլն:

Երբ խոսվում է ժամանակային ձևերի իմաստների և կիրառությունների մասին, ապա որպես կանոն նկատի է առնվում ժամանակային ձևերի ոչ թե հարաբերական, այլ բացարձակ կիրառությունները, այսինքն՝ այնպիսիները, որոնք կախված չեն այլ ժամանակային ձևերի կիրառությունից²: Անցյալ անկատար ժամանակի հատկությունները հստակ հասկանալու և մեկնաբանելու համար այն հաճախ զուգադրվում է անցյալ կատարյալ ժամանակին: Օրինակ՝

Երեկ ժամը յոթին Մարկոն նամակ էր գրում:

և Երեկ ժամը յոթին Մարկոն նամակ գրեց:

Առաջին նախադասության մեջ անցյալ անկատարը նկարագրում է տվյալ պահին ընթացքի մեջ գտնվող գործողություն, մինչդեռ երկրորդում նշվում է գործողության ամբողջ ընթացքը, որն ունի սկիզբ, ընթացք և ավարտ: Եթե երկրորդ նախադասության մեջ երևում է, որ նամակը գրվել է և հասցվել է իր ավարտին, ապա առաջին նախադասության մեջ հնարավոր չէ հասկանալ, թե արդյոք գործողությունը ավարտ ունեցե՞լ է, թե՞ ոչ: Գետևաբար անցյալ անկատար ժամանակն օգտագործվում է տվյալ պահին որևէ իրավիճակ նկարագրելու համար, մինչդեռ անցյալ կատարյալը օգտագործվում է նշելու համար մի գործողություն, որն արդեն կատարվել է: Խոսքի մեջ անցյալ անկատար և անցյալ կատարյալ ժամանակների օգտագործման ընտրության մեջ շատ կարևոր է նկատի ունենալ այն, որ եթե բայի արտահայտած գործողությունը տեղի է ունեցել որոշակի պահին, և այդ պահը կարող է կարևոր հանդիսանալ խոսակցության ընթացքում, ապա այդ դեպքում նախընտրելի է օգտագործել անցյալ կատարյալ ժամանակը, իսկ եթե ժամանակային սահմանումը բացակայում է կամ կարևոր չի հանդիսանում ապա օգտագործվում է անցյալ անկատարը³:

Ժամանակակից իտալերենում անցյալ անկատար ժամանակն ունի լայն կիրառում: Այն հանդես է գալիս բավականին տարբեր կիրառություններով: Սույն աշխատանքում անդրադառնում ենք իտալերենի և հայերենի բայի անցյալ անկատար ժամանակաձևի ամենահիմնական կիրառություններին, ինչպես նաև շարահյուսական-գործառական համապատասխանությանը թարգմանության մեջ և նրանց ոճական առանձնահատկություններին, ընդ որում առանձին-առանձին և զուգադրական վերլուծությամբ:

² Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Երևանի համալս. հրատ., 1997, էջ 127

³ L. Seriani, Grammatica italiana. Italiano comune e lingua letteraria, Stampatre, Torino 2010, pag. 379

- 1) Անցյալ անկատարը պատումների մեջ (*պատմողական, պատմական կամ ժամանակագրական անցյալ անկատար-imperfetto narrativo*) կարող է արտահայտել ոչ միայն բացարձակ, այլ հարաբերական իմաստ:

ա) Այս դեպքում բայական ժամանակաձևը ցույց է տալիս բացարձակ իմաստ, օրինակ՝

Իսկ ինչ Բատիստային *էր վերաբերում*, ապա նա *չէր բացքնում* իր հաղթանակող և բարձր տրամադրությունը, մի գլուխ *խոսում էր*, գրեթե առանց ընդմիջելու, *ուշում էր* շատ մեծ ախորժակով և գուցե նույնիսկ շատ ավելի հաճախ *ծեռքը խմիչքներին էր մեկնում*:⁴ (էջ 580) ~ Battista non nascose suo stato d'animo giubilante e vittorioso e non fece che parlare, ininterrottamente, pur mangiando di buon appetito e bevendo con larghezza forse eccessiva." (pag. 173)

Տվյալ օրինակում երևում է, որ թարգմանության մեջ օգտագործված բայական ժամանակները չեն համապատասխանում բնօրինակի ժամանակաձևերին, որում անցյալ անկատար ժամանակները արտահայտվում են անորոշ դերբայով: Ես իմ աբբոյը ինքսմբ զայրույթով փոթորկվել ու *ծառս էի եղել* կնոջիցս բաժանվելու և դրան հաջորդող մեռության մտքից: Սակայն միևնույն ժամանակ *զգում էի*, որ չնայած զայրույթս ամբողջովին *անկեղծ էր*, բայց և այնպես խոսքերս *հնչում էին* ոչ համոզիչ: (էջ 537) ~ Tutta la mia persona si ribellava con violenza al pensiero del distacco e della solitudine che ne sarebbe seguita: ma mi accorgevo che, nonostante la sincerità di questa ribellione, non ero affatto convincente, al contrario. (pag. 130)

Մինչդեռ այս օրինակում կարելի է տեսնել ժամանակաձևերի բացարձակ համապատասխանություն:

բ) հարաբերական իմաստ (այս դեպքում մենք գործ ունենք այդպես կոչված *միաժամանակյա անցյալ անկատար* ժամանակաձևի հետ- *imperfetto di contemporaneità*), ցույց տալու համար անցյալում ծավալվող մի գործողություն, որի ընթացքում կատարվեց և ավարտվեց մեկ այլ գործողություն, օրինակ՝ Առաջին անգամ, երբ *հանդիպեցի* Բատիստային, ես *գտնվում էի* չափազանց ծանր, եթե չասենք՝ հուսահատական վիճակում և *չգիտեի* ինչպես դուրս գալ այդ դրությունից:» (էջ 424) ~ Al tempo che incontrai per la prima volta Battista, mi trovavo in una situazione oltremodo difficile, per non dire disperata, e non sapevo come uscime." (pag. 17)

* Այսուհետև բնագրից և թարգմանությունից քաղված օրինակները բերված են Ա.Մորավիայի, «Արհամարհանք» գրքից՝ կից փակագծում նշելով համապատասխան էջը:

Այդ ասելով, ես գգացի, որ իմ առաջարկությունը արվեց ոչ միայն սիրող ամուսնու զիջողությամբ: Իրականում, ըստ երևույթի ուզում էի փորձել էմիլիային: (էջ 434) ~ *Mi accorsi, mentre parlavo, che questa proposta non era soltanto una dimostrazione di affettuosa arrendevolezza; in realtà, come pensai, volevo metterla in prova.* (pag. 29)

Ինչպես երևում է վերոնշյալ օրինակում, բնագրում օգտագործված ժամանակածները հստակ արտահայտում են հարաբերական իմաստ՝ *Mi accorsi, mentre parlavo-մինչդեռ խոսում էի, հասկազա*, մինչդեռ հայերեն թարգմանության մեջ կրկին տեսնում ենք անորոշ դերբայի օգտագործությունը:

- 2) **Սովորության համաձայն կատարվող և կրկնվող գործողություններ** արտահայտելու համար, այդպես կոչված, **կրկնական անցյալ անկատար** (*imperfetto iterativo*): Այս ժամանակածի կողքին հաճախ կարելի է հանդիպել ժամանակի մակբայների՝ *միշտ, երեկ, հաճախ, երբեք, երբեմն* և այլն: Օրինակ՝

Գրասեղանի վրա *միշտ դրված էր* լինում թարմ ծաղիկներով մի ծաղկաման, իմ թղթերը այնպիսի խնամքով էին կարգի բերվում ու դրվում սեղանիս, որ թվում էր, թե ինձ հրավիրում են աշխատանքի, խոստանալով առավելագույն չափով ապահովել աշխատանքային անդորրն ու հարմարավետությունը: *Երբեք չէր պատահում*, որ թեյի սեղանին անծեռնոցիկներ ու տուփով խմորեղեն դրված *չլինեին*: (էջ 425) ~ *C'erano sempre dei fiori. In un vaso, sulla mia scrivania; le mie carte erano sempre disposte in un ordine amorevole e suggestivo, come per invitarmi a lavorare e garantirmi la massima intimità e quiete; sopra un tavolino il servizio del tè non mancava mai dei suoi tovaglioli e di una scatola di biscotti; mai un indumento o altro oggetto intimo si trovava là dove non doveva stare, in terra o sulle seggiole, come avviene spesso in simili dimore anguste e provvisorie.*" (pag. 18)

Սոսկալիտանից *նա տեղից վեր էր կենում* ինձանից շուտ, *գնում էր* տանտիրոջ խոհանոցը, նախաճաշ պատրաստում և մատուցարանով *բերում ինձ*: (էջ 426) ~ *"Al mattino si alzava prima di me, andava nella cucina dell'affittacamere, preparava la colazione e me la portava lei stessa, sopra un vassoio. (pag. 19)*

- 3) **Նկարագրությունների մեջ (նկարագրական անցյալ անկատար-*imperfetto descrittivo*)**: Այս ժամանակը, հավանաբար, ամենացատուուն է արտահայտում գործողության տևողության և անավարտության կարգային (ասպեկտային) առանձնահատկությունները, օրինակ՝

Ավելի քան հարյուր մետր ցածում, որևի շողերով ողողված թրթռալով *փայլփայլում էր* ծովը, որը, ըստ քանու ուղղության, անընդհատ *երկնեղանգվում* ու *փոխում էր* գույնը՝ Նրա հարթությունը մի տեղ *երկնագույն էր*, մի ուրիշ տեղ՝

ասարուտ, դրե՞ց մանուշակառուն, իսկ արե՞ց անէ՛լի հեռու գտնվող տեղերում լոկվա՞նայ (էջ 307) ~ Il mare, cento metri più sotto, palpitava e scintillava al sole, trascorrendo e cangiando di colore secondo il vento, qui celeste, là un blu quasi violetto, più lontano verde. (pag. 200) ~

Արդեն գրե՞տ է, և աստղաճա՞ղ յուսակո՞ղմա՞ն էր տակալին (շեղացող տառնի մեղմ շողողով, որոնք սփռված էին անթողջ երկնքով մեկ (էջ 572) ~ Era ormai notte: e la miscezza era blandamente illuminata dal chiarore indiretto ma già intenso che diffondeva per il cielo la luna ancora invisibile. (pag. 165)

4) Խոսակցական (եզվում (ըզվա՞նս անցյալ անկատար-ուզե՞րտ *desiderativo*), հատկապես ընտանեկան միջավայրում, անցյալ անկատարն երբեմն ձեռք է բերում եղանակաբորոք իմաստ և փոքարո՞նում է ներսառալեանեկան եղանակին, օր.

Էտեն երեկոյան ես թե՛ք թողել էի, որ ի՞նձ համոզես ջո փաստարկներով... Բայց հետո հասկացա, որ դրանք չպետք է հաշիվ առնեմ... Ես չգիտեմ, քե՛զ դու ինչու ես ուզում, որ աշխատեմ այդ սցենարի մրա և ոչ էլ ուզում եմ իմանալ... Ես գիտեմ միայն մի բան, որ և ի՞նձ համար, և թե՛ք համար ավելի լավ կլինի, եթե ես այդ չանեմ (էջ 632) ~ Ieri sera mi ero lasciato a persuadere dalle tue ragioni... ma poi mi capito che non dovevo tenerne conto... non so per quale motivo tu mi consigli di fare la sceneggiatura, né voglio saperlo... so soltanto che è meglio. Per me e anche per te, che io non lo faccia" (pag. 223)

Այս օրինակի մրա երևում է, որ բնօրինակում հեղինակը օգտագործել է անցյալ անկատար ժամանակը՝ *"dovevo"* պայմանական եղանակի անցյալ ժամանակի միջատեն *"non avrei dovuto"*, որը արտահայտում է անցյալում չիրականացված գործողություն, միջոցով հայտնեն քաղցանության մեջ առկա է սահմանական եղանակի ներկա ժամանակը՝ «չպետք է հաշիվ առնեմ».

Ժամանակի այս ընտրությունը պատահական չէ, որովհետև ինչպես գիտենք, սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը ցույց են տալիս խոսելու պահին ընթացքի մեջ գտնվող գործողություն, մի գործողություն, որի սկիզբն անշուշտ ծավալվում է խոսելու պահից առաջ, բայց և խոսելու պահին ընթացքի մեջ է, չարունակվում է հարածի՞ք: Իր այս բնույթով հայտերենի ներկա ժամանակն իրոք անկատար ներկա է, և անսահմանափակ ժամանակ է, որովհետև չի սահմանափակված ոչ սկզբով, ոչ էլ վերջով և իր այս հատկությունով նման է անցյալ անկատար ժամանակին՝ այն տարբերությամբ, որ անցյալ անկատար բայի գործողությունը ծավալվում է անցյալում:

5) Ներկա ժամանակում՝ արտահայտելու համար քաղաքավարի ցանկություն (*imperfetto di modestia*), որի իրականացումը պարտադիր

այսման չի հանդիսանում գրուցակցի համար: Այս բայածևի օգտագործումը ոչ մի կերպ կապված չէ անցյալի հետ և կիրառվում է ներկա և պայմանական եղանակի իմաստով, օրինակ՝

-Ո՛հ, ես ուզում էի քեզ ասել, -անշտապ արտասանեց էմիլիան, -որ հենց այսօրվանից գնում եմ մորս մոտ... Ես ուզում էի մինչև նրան զանգահարելը քեզ զգուշացնել... Ուրիշ ոչինչ, այժմ դու արդեն իմացար: (էջ 536) ~ No, volevo dirti", ella pronunziò lentamente, "che oggi stesso, torno dalla mamma... Ho voluto avvertirti prima di telefonarle... , ora ecco, tu lo sai. (pag. 129)

Բացի վերոնշյալ տեսակներից, իտալերենում տարբերում են նաև *անիրական անցյալ անկատար* (*imperfetto irreale*), *անրջային կամ խաղային անցյալ անկատար* (*imperfetto onirico o ludico*) և *հեռանկարային անցյալ անկատար* (*imperfetto prospettivo*), որոնք ունեն ավելի սահմանափակ կիրառություն: Դրանց անդրադառնալու ենք առանձին աշխատանքում:

Էլենելով անցյալ անկատար ժամանակի վերոնշյալ տեսակների և օգտագործման յուրահատկություններից՝ կարելի է եզրակացնել, որ առաջին երեք տեսակները՝ պատմողականը, նկարագրականը և կրկնականը, արտահայտում են իրական գործողություններ, ներկայացնում են այդ գործողությունները որպես այդպիսին, մինչդեռ այլ տեսակների կիրառումը կախված է գրուցակցի երևակայությունից կամ ենթադրությունից:

Գրականություն

1. L. Seriani "Grammatica italiana, Italiano comune e lingua letteraria". Stampatre Torino 2010.
2. M. Sensini "La Grammatica della lingua italiana". Arnoldo Mondadori Editore. Milano 1997
3. Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզու» Երևանի համալսարանի հրատ., Եր., 1983:
4. Մ. Ասատրյան «Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր» Երևանի համալսարանի հրատ., Եր., 1983:

The act of the verb in Italian in the past tense (imperfective aspect) in the Armenian language. (based on the translation of the novel "Contempt" ("Disprezzo") by A. Moravia)

The present article is aimed to represent the act of the verb in Italian in the past tense (imperfective aspect) in A. Moravia's novel "Contempt" and in its Armenian translation.

In Italian the past imperfective tense is used in many different ways. In the following article we examine the most basic usage of the past imperfective tense, both in Armenian and Italian, as well as its syntactic- functional correspondence and stylistic specifications in the translation with their separate comparative analysis.

In the research the presented examples are from both the original book and from its Armenia translation and they reflect totally the specifications of the usage of the past imperfective tense, as well as the correspondence and differences in the used verb tenses.